ՀԱՅՏ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմի համար

Հայտատու՝ Հռիփսիմե Քոչարյան

Կանաչ տնտեսության եւ սոցիալական ձեռնարկատիրության փորձագետ

«Հաջողակ կին» ՀԿ ղեկավար, սոցիալական ձեռնարկատեր, մասնագիտությամբ՝ կառավարիչ

Հեռ.՝ +374 94 56 10 30, Էլ. փոստ՝ kocharyanhripsime@gmail.com, hripkoch@gmail.com

Հաշվառման հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Լեռնագոգ, Պ. Սեւակ 68,

Բնակության հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Մանանդյան 1/3 բն. 40

Հարգելի պարոն նախարար

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի անդամի կազմում ընդգրկվելու համար՝ որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ:

Գործունեությանս ոլորտն ու փորձառությունը

Վերջին հինգ տարվա ընթացքում ես անընդհատ ու նպատակային գործունեություն եմ ծավալել նախարարության իրավասության տակ գտնվող հիմնական ոլորտներում՝ հատկապես կանաչ տնտեսություն եւ սոցիալական ձեռնարկատիրություն, համայնքային զարգացում, պատասխանատու եւ կայուն տնտեսական քաղաքականություն, բնապահպանական եւ սոցիալ-էկոլոգիական ծրագրեր:

Ունեմ ավելի քան 10 տարվա մասնագիտական փորձ այդ թվում՝

- քաղաքականությունների և ռազմավարությունների մշակում
- սոցիալական ձեռնարկատիրության էկոհամակարգի զարգացում
- մասնագիտական հետազոտությունների իրականացում
- միջգերատեսչական համագործակցություն
- համայնքային զարգացման եւ կանաչ տնտեսական մոդելների ներդրում:

Նախկին ծրագրեր եւ իրականացված աշխատանքներ

- «Լուռ տառապողները. կանայք հանքարդյունաբերության սրտում» լայնածավալ հետազոտություն՝ Թեղուտ, Շնող, Ախթալա, Մեծ Այրում համայնքներում, որով վեր է հանվել նաեւ տնտեսական ազդեցությունը կանանց կյանքի որակի վրա եւ առաջարկվել է համայնքների կանաչ տնտեսական զարգացման ուղիներ:

- Սոցիալ-տնտեսական, որպես այլընտրանքային զարգացման ռազմավարությունների մշակում Լոռու մարզի մի շարք համայնքների համար՝ Շամլուղ, Գոգարար, Սարահարթ եւ այլ բնակավայրերի համար։ Ռազմավարության նպատակն է եղել՝ կայուն, համայնքահեն ու կանաչ տնտեսությունների ձեւավորումը։ Այս պահին եւս մշակում եմ մեկ այլ ռազմավարական զարգացման պլան։
- Սոցիալական ձեռնարկատիրության եւ պատասխանատու տնտեսության զարգացում. «Էկոպայուսակ» ՍՊԸ-ի հիմնադիր եւ ղեկավար, որի աշխատանքային գործունեության շրջանակում եւ իմ ղեկավարած ՀԿ-ի հետ համատեղ իրականացրել ենք պլաստիկի նվազեցման ու պատասխանատու սպառման իրազեկման արշավներ։
- Դիպլոմային աշխատանք՝ «Ձեռնարկատիրությունների սոցիալ-էկոլոգիական պատասխանատվություն» (2023), որը կենտրոնացված է եղել ձեռնարկությունների շրջակա միջավայրի պատասխանատվության եւ կայունության մեխանիզմների վրա։

Իմ գործունեությունը լիովին համապատասխանում է «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում ամրագրված տնտեսության, սոցիալական ձեռնարկատիրության, կայուն զարգացման եւ համայնքային քաղաքականությունների գերակայություններին։

Մասնակցության նպատակ

Ինձ համար կարեւոր է աջակցել նախարարությանը մասնակցային քաղաքականության մշակման, կանաչ տնտեսության խթանման, սոցիալական ձեռնարկատիրության եւ համայնքային զարգացման ոլորտներում աշխատանքներին՝ ՔՀԿ փորձի եւ դաշտային տեղեկությունների փոխանցման միջոցով։ Վստահ եմ, որ իմ բազմամյա փորձառությունն ու ներգրավվածությունն այս ոլորտում կարող են օգտակար լինել հասարակական խորհրդի արդյունավետ աշխատանքին։

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը։

Հարգանքով՝ Հռիփսիմե Քոչարյան

Սոցիալական ձեռնարկատիրության եւ կանաչ տնտեսության փորձագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2017-10-04

«ՀԱՋՈՂԱԿ ԿԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.931299
Հիմնադրման տարի	2016
Գրանցման ամսաթիվ	2016-10-19
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	50187210
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	01272896
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	171299
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ՐԱՖՖՈՒ / Շ / 97/1 Ք. ԵՐԵՎԱՆ 0064 ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	(10)000000

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Նախագահ
Անուն Ազգանուն	ՀՈՒՓՍԻՄԵ ՔՈՉԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ
Անձնագրային տվյալներ	002562692 2015-11-10 001
Հասցե	Պ. ՍԵՎԱԿԻ Փ. / Տ / 68 ԼԵՌՆԱԳՈԳ 1006 ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Էջ 2

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2017-10-04	**Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Հասմիկ Զաքարյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **04-10-2017**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՊԱՏՎԱՐԱԿԱՆ ԱՆՁԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՈՎ * ՂԱՍԵՓԱՐԱԿՈՒՄ ՎԵՐՈՒՄՈՎ * ՎԵՐՈՒՄՈՎ 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ - 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հաջողակ կին» երիտասարդական
հասարակական կազմակերպության
համագումարի
2017 թվականի սեպտեմբերի «15»-ի որոշմամբ
Կազմակերպության նախագահ՝
_____ Հռիփսիմե Քոչարյան
ստորագրություն

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ իրավաբանական անձայց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
19.10.2016 թ.
Գրանցման թիվը 211.171.931299
Վկայական 03Ա1081299
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 01272896
19.10.2016 թ.գրանցված կանոնադրության
թիվ001-2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից՝ «04» 10
2017 թվական

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
_____ / Հասմիկ Զուբարյան /
ստորագրություն, անուն, ազգանուն

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՋՈՂԱԿ ԿԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

Երևան – 2017թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հաջողակ կին» երիտասարդական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական և/կամ/ իրավաբանական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով, ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը, օրենքին համապատասխան, ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:

1.3. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, հրապարակայնությունը, խտրականության բացառումը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, իրավահավասարությունը, բարեխղճությունը և հաշվետվողականությունը:

1.5. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:

1.6. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Տարբեր լեզուներով գրված տեքստերի մեկնաբանությունից ծագած որևէ անհամապատասխանության դեպքում, հայերեն գրված տեքստը համարվում է որոշիչ:

1.7. Կազմակերպության լրիվ անվանումն է՝

- հայերեն՝ «Հաջողակ կին» երիտասարդական հասարակական կազմակերպություն, կրճատ՝, «Հաջողակ կին» ԵՀԿ
- ռուսերեն՝ "Успешная Женщина" молодежная "общественная организация, կրճատ՝ Успешная Женщина" МОО
- անգլերեն՝ "Success Lady" Youth Non-governmental organization, կրճատ՝ "Success Lady" YNGO:

1.8. Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից, ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն, լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ տարադրամով:

1.9. Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում ինքնավստահ կնոջ ուրվագծված պատկեր, ով իր մի ձեռքը վեր մեկնած պարզում է հաղթական մրցանակ: Պատկերի տակ անգլերեն գրված է "Success Lady": Խորհրդանիշը նարնջագույն եւ սեւ գույների են. Նարնջագույնը խորհրդանշում է հաղթանակ, անկոտրում կամք, պայքարելու ներուժ հանուն բարության եւ արդարության: Սեւը գույնը , դա դասական եւ հստակ նպատակ, պարտաճանաչություն խորհրդանշող գույն է:

1.10. Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից և կրում է համապատասխան պարտականություններ:

1.11. Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:

1.12. Կազմակերպությունը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.13. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով:

1.14. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

1.15. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ռաֆֆու 97/1, հեռ. (+374 94) 561 030 էլ.հասցե kocharyanhripsime@gmail.com:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կազմակերպության տեսլականն է տեսնել ՀՀ տնտեսությունը զարգացած եւ կայուն: Դժվար է պատկերացնել զարգացած տնտեսություն առանց կանանց ակտիվ ներգրավման:

2.2. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- ապահովել երիտասարդ կանանց ակտիվ մասնակցությունը ՀՀ տնտեսության զարգացմանը.
- նպաստել բարեփոխումներին ներգրավելով առավել բարձր որակավորումներով կանանց.
- աջակցել սոցիալ ձեռնարկատիրության զարգացմանը
- երիտասարդ կանանց մեջ զարգացնել նախաձեռնողականությունը, ձեռներեցությունը եւ առաջնորդությունը.
- նպաստել նրանց գիտելիքների եւ հմտությունների զարգացմանը.
- աջակցել ինքնազարգացմանը բոլոր հնարավոր տարբերակներով, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չի արգելվում:

2.3. Կազմակերպության առարկան ու խնդիրներն են՝

- կազմակերպել կրթական տարբեր տեղական եւ միջազգային նախագծեր ու միջոցառումներ.
- կազմակերպել հմտությունների զարգացման եւ անձնային աճի ուղղորդող սեմինարներ եւ հանդիպումներ.
- կապել (մեկտեղել) շահառուներին եւ բարձրացնել իրազեկումը.
- կազմակերպել տեղական եւ միջազգային տարբեր վերապատրաստումներ, փորձի փոխանակման եւ կրթական ծրագրեր.
- կանանց համար կազմակերպել անհրաժեշտ խորհրդատվություն.
- ստեղծել անձնային աճի ակումբներ՝ անգլիախոսների, ընթերցասերների եւ այլն.
- կազմակերպել ճանաչողական այցեր:

2.4. Իր նպատակներն, առարկաններն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

2.5. Իր նպատակներն, առարկաններն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝

մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ, ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, ինչպես նաև ցանկանցած իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, նպատակային խնդիրների իրականացմանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը, իսկ իրավաբանական անձի դեպքում իրավասու մարմնի կողմից լիազորված անձը՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա, գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ) կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարությանն ըստ բնակության վայրի:

3.3. Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:
Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

3.4. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է խորհուրդը կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարությունը՝ խորհրդի կողմից հաստատված՝ առանձնացված ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված կարգով: Առանձնացված ստորաբաժանման ղեկավարը յուրաքանչյուր ամսվա վերջում տեղեկատվություն է տալիս խորհրդին՝ անդամների կազմի և քանակի վերաբերյալ, եթե դրանք փոփոխվել են:

3.5. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից՝ իր դիմումի համաձայն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում խորհրդի որոշմամբ:

3.6. Կազմակերպության այն անդամը, որը վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար կամ թույլ է տալիս կանոնադրության կոպիտ խախտում, խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1. Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում, բացառությամբ կազմակերպության անչափահաս անդամների, որոնք չեն կարող ընտրվել կազմակերպության կառավարման մարմիններում,

4.1.2. ներկա լինելու Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին,

4.1.3. անվճար օգտվելու նրա ծառայություններից.

4.1.4. ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ

նրանց ընդունած որոշումների պատճենները.

4.1.5. Կազմակերպության վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները.

4.1.6. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.

4.1.7. իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.2.1. կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

4.2.2. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները,

4.2.3. վճարել անդամավճար, խորհրդի կողմից սահմանված կարգով և չափով:

4.3. Կազմակերպության անչափահաս անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկություններ չեն նախատեսվում: Կազմակերպության անչափահաս անդամներն ունեն Կազմակերպության անդամների համար սույն կանոնադրությամբ նախատեսված միևնույն իրավունքները, բացառությամբ Կազմակերպության մարմիններում ընտրվելու իրավունքի, և կրում են միևնույն պարտականությունները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

5.1.1. իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,

5.1.2. բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,

5.1.3. ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից,

5.1.4. ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

5.1.5. տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,

5.1.6. կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,

5.1.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

5.1.8. համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված

գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

5.1.9. կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

5.2. Կազմակերպությունը պարտավոր է՝

5.2.1. վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,

5.2.2. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,

5.2.3. պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.

5.2.4. սույն օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

5.2.5. Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,

5.2.6. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,

5.2.7. իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

5.2.8. կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

5.3. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

6.1. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

6.2. Կազմակերպության շահառուներն են հայ կանայք և նրանց ծառայություն մատուցող կազմակերպությունները, ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը:

6.3. Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում «Հասարակական

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են ընդհանուր ժողովը,(այսուհետ ժողով) խորհուրդը և նախագահը:

7.2. Կազմակերպության կառավարման մարմիններն ընտրովի են:

7.3. Կազմակերպության կառավարման մարմինների անդամ կարող են դառնալ 18 տարին լրացած անձինք:

7.4. Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը նրա անդամների ժողովն է, որին պատկանում է Կազմակերպության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը: Կազմակերպության ժողովը գումարվում է չորս տարին մեկ անգամ՝Կազմակերպության նախագահի կողմից:

7.5. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները հետևյալ համամասնությամբ՝ մինչև 200 անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 10 անդամից մեկ պատվիրակի հաշվով, մինչև 400 անդամի դեպքում յուրաքանչյուր 20 անդամից մեկ պատվիրակ, 400 և ավելի անդամի դեպքում՝ յուրաքանչյուր 30 անդամից մեկ պատվիրակ: Խորհուրդը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 10 օր առաջ պատվիրված նամակով, էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

7.6. Կազմակերպության արտահերթ ժողով գումարվում է Կազմակերպության նախագահի, խորհրդի անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնության կամ անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ, նշված նախաձեռնությունից ոչ ուշ քան 5 օրվա ընթացքում՝ Կազմակերպության նախագահի կողմից: Արտահերթ ժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով:

Եթե ժողովը պետք է անցկացվի պատվիրակներով և հնարավոր չի լինում սահմանված ժամկետում պատվիրակներ ընտրել, ապա ժողովին հրավիրում են նախորդ ժողովի պատվիրակներին: Խորհուրդը որոշում է արտահերթ ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը և այդ մասին ոչ ուշ քան 5 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

7.7. **Կազմակերպության ընդհանուր ժողովը.**

ա) հաստատում է Կազմակերպության կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ կամ լրացումներ դրանում և (կամ) հաստատում է նոր խմբագրությամբ կանոնադրությունը,

բ) հաստատում է կազմակերպության կառուցվածքը, որոշում է Կազմակերպության խորհրդի թվաքանակը, չորս տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության խորհրդի անդամներին, փոփոխում է խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի անդամների լիազորությունները,

էջ 7-12-ից

գ) չորս տարի ժամկետով ընտրում է Կազմակերպության գործադիր մարմին՝ նախագահ, որը ի պաշտոնե մտնում է Կազմակերպության խորհրդի կազմի մեջ և հանդիսանում է կազմակերպության խորհրդի նախագահը, վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,

դ) քննարկում և հաստատում է Կազմակերպության խորհրդի և կազմակերպության նախագահի անցած 4 տարվա գործունեության հաշվետվությունները, ինչպես նաև առնվազն 4 տարին մեկ անգամ հաստատում է Կազմակերպության նախագահի կողմից ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,

ե) ընդունում է Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումները, հաստատում է կազմակերպության փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը,

զ) որոշում է ընդունում կազմակերպության լուծարման մասին, բացառությամբ՝ դատարանի վճռով լուծարումից,

ը) դադարեցնում է կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կազմակերպության կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունները,

է) ստեղծում է այլ իրավաբանական անձ, որոշում է ընդունում այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին:

Կազմակերպության ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Կազմակերպության ժողովին մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Օրենքով և սույն կանոնադրությամբ Կազմակերպության բարձրագույն մարմնի (ժողովի) բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի՝ 7.7 կետի ա, բ, գ, ե, զ, ը, է կետերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների թվի 2/3-ից ավելին: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.8.Կազմակերպության խորհուրդը.

ա) համարվում է Կազմակերպության կառավարման կոլեգիալ մարմինը Կազմակերպության ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

բ) քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Կազմակերպության ժողովի և նախագահի իրավասությունների մեջ,

գ) նախապատրաստում է Կազմակերպության ժողովները, սահմանում է կազմակերպության ժողովի պատվիրակների քվոտան ըստ սույն կանոնադրությամբ սահմանված համամասնությամբ և կազմակերպության անդամների թվի, Կազմակերպության ժողովի գումարման օրվանից առնվազն երեսուն օր առաջ կազմակերպում է կազմակերպության ժողովի պատվիրակների ընտրությունը,

դ) հաստատում է Կազմակերպության քառամյա ռազմավարական փաստաթուղթը (պլանը) և հսկում դրա կատարման ընթացքը,

ե) սահմանում է գործադիր մարմնի վարձատրության կարգը նպայմանները, ընտրում է կազմակերպության աուդիտն իրականացնող անձին, որոշումներ է ընդունում Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ ներկայացուցչություններ և մասնաճյուղեր, ինչպես նաև հիմնարկներ, հանձնաժողովներ, բաժիններ, բաժանմունքներ, ակումբներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց Կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող

հակասել սույն Կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին տալիս է լիազորագրեր, հաստատում կամ չեղյալ է համարում Կազմակերպության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարների որոշումները Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների տարածքային գրասենյակներ ստեղծելու և տարածքային գրասենյակների ղեկավարներ նշանակելու ու ազատելու մասին,

զ) առաջարկություն է ներկայացնում ժողովին տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանցում մասնակցելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

է) որոշում է կայացնում լրատվական միջոցներ ստեղծելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

ը) առաջարկություն է ներկայացնում ժողովին հիմնադրամներ ստեղծելու վերաբերյալ, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

թ) առաջարկություն է ներկայացնում ժողովին ոչ առևտրային կազմակերպություններ հիմնադրելու և այդ կազմակերպություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին, Կազմակերպության անդամակցելու վերաբերյալ,

ժ) որոշում է կայացնում Կազմակերպությանն անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ: Որոշում է անդամավճարների և մուտքավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:

7.9. Կազմակերպության խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են Կազմակերպության խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.10. Կազմակերպության խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է տարին մեկ անգամ: Կազմակերպության խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ի գրավոր պահանջով Կազմակերպության նախագահի կողմից կամ Կազմակերպության նախագահի կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել խորհրդի ընդլայնված նիստեր՝ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև Կազմակերպության այլ անդամների մասնակցությամբ:

7.11. Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է.

ա) ղեկավարում է Կազմակերպության խորհրդի աշխատանքները իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարումը, այդ թվում՝ ֆինանսական գործունեությունը,

բ) ապահովում է Կազմակերպության ժողովի, Կազմակերպության խորհրդի կողմից ընդունված որոշումների և հանձնարարականների կատարումը, դրանց գործունեությանն ուղղված բոլոր հարցեր լուծումը: Իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ և ստորագրում է հրամաններ, կարգադրություններ ու այլ անհրաժեշտ փաստաթղթեր, տալիս է հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ:

գ) հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, դրույքաչափերը և Կազմակերպության աշխատակազմի կանոնակարգը, որը չի կարող հակասել սույն կանոնադրությանը,

դ) Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատում է Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք առնվազն չորս տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

ե) աշխատանքի է ընդունում և ազատում է աշխատանքից Կազմակերպության աշխատակազմի հաստիքային և պայմանագրային աշխատողներին;

զ) հաստատում է կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները, Կազմակերպության ժողովին հաշվետվություն է ներկայացնում Կազմակերպության խորհրդի և իր գործունեության մասին,

է) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

ը) Կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի, ներկայացնում է կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքն ու դրամական միջոցները (այդ թվում՝ դրամաշնորհային միջոցներն ու անդամավճարների ֆոնդը)՝ մինչև 1 միլիոն ՀՀ դրամի չափով միանձնյա, 1-10 միլիոն դրամի չափով՝ խորհրդի համաձայնությամբ, 10 միլիոնից ավելի դրամի չափով՝ ժողովի համաձայնությամբ, տալիս է լիազորագրեր, բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ, Կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, ստորագրում Կազմակերպության ժողովի և խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

թ) նախագահում է Կազմակերպության ժողովի և խորհրդի նիստերը,Կազմակերպության ժողովի նիստերի նախագահումը կարող է լիազորել Կազմակերպության անդամ այլ անձի,

ժ) հրավիրում և գումարում է Կազմակերպության ժողովի և խորհրդի հերթական և արտահերթ նիստերը,

ժա) որոշում է ընդունում ցանկացած տեսակի և քանակի գույք ձեռք բերելու, տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու, այդ թվում՝ օտարելու և դուրս գրելու վերաբերյալ՝ մինչև 1 միլիոն ՀՀ դրամի չափով միանձնյա, 1-10 միլիոն դրամի չափով՝ խորհրդի համաձայնությամբ, 10 միլիոնից ավելի դրամի չափով՝ ժողովի համաձայնությամբ,

ժբ) հաստատում է Կազմակերպության հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,

ժգ) սահմանում է Կազմակերպության մարմիններում ընդգրկված անձանց (բացառությամբ Նախագահի)՝ իրենց պարտականությունները կամ գործադիր մարմնի հանձնարարությունները կատարելիս կատարված ծախսերի փոխհատուցման և Կազմակերպության կողմից վարձատրության կարգը,

ժդ) անհրաժեշտության դեպքում որոշումներ է ընդունում Կազմակերպության նախագահին կից հասարակական կարգով ժամանակավոր հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնադրությանը, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին,

ժե) իրականացնում է Կազմակերպության ժողովի և խորհրդի կողմից իր վրա դրված այլ լիազորություններ:

էջ 10-12-ից

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից և նվիրատվություններից, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից, դրամական մուտքերը պետական բյուջեից, իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

8.2. Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտներ: Կազմակերպությանը պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար:

8.3. Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք (բացառությամբ Կազմակերպության նախագահի) Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել Կազմակերպության նախագահի կողմից սահմանված կարգով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել ժողովի կամ դատարանի որոշմամբ:

9.2. Ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

9.3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

«ՀԱՋՈՂԱԿ ԿԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՊԱՏԿԵՐԸ

SUCCESS
LADY

Սույն կանոնադրությունը կազմված է 15.09.2017թ. և բաղկացած է 12 թերթից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա1081299

Իրավաբանական անձի անվանումը
«ՀԱԶՈՂԱԿ ԿԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.931299**
Գրանցման ամսաթիվը **2016-10-19**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **50187210**
Հարկ վճարողի հաշվառման համար **01272896**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"19" 10 2016 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

L.S.

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա1081299 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ՀԱԶՈՂԱԿ ԿԻՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **ՐԱՖՖՈՒ / Շ / 97/1 Ք. ԵՐԵՎԱՆ 0064 ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ ՀՈՒՓՍԻՄԵ ՔՈՉԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ
անձնագիր **002562692**, տրվ. **2015-11-10, 001** կողմից,
հասցե **Պ. ՍԵՎԱԿԻ Փ. / 5 / 68 ԼԵՌՆԱԳՈԳ 1006 ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը ———

Այլ տեղեկություններ ———

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"19" 10 2016 թ.

ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

L.S.

Հայաստան, 0006, Երևան, Մանանդյան փող., 1/3 շենք, Հեռ. (+374)94561030, (+374)98597706
էլ. հասցե kocharyanhripsime@gmail.com

Լուռ տառապողները՝ կանայք հանքարդյունաբերության սրտում

Հետազոտություն

Նոյեմբեր 2024

«Լուռ տառապողները՝ կանայք հանքարդյունաբերության սրտում» ծրագիրն իրականացնում է «Հաջողակ կին» երիտասարդական ՀԿ-ն Հայաստանում Կանանց Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ

Բովանդակություն

Ներածություն 3
Մեթոդաբանություն 5
Հետազոտության արդյունքներ 7
Հանքարդյունաբերության ազդեցությունը կանանց առողջության վրա 7
Տնտեսական ազդեցությունը կանանց վրա 9
Բնապահպանական ազդեցությունը և հետևանքները կանանց վրա 13
Սոցիալական և համայնքային ազդեցությունը կանանց վրա 15
Հետազոտության մասնակիցների առաջարկներ 18
Եզրակացություն և առաջարկներ 21

Ներածություն

Հանքարդյունաբերությունը, լինելով շատ ազգային տնտեսությունների նշանակալի մասը, ունի հստակ գենդերային հետևանքներ, որոնք անհամաչափ կերպով ազդում են հանքարդյունաբերական համայնքներում ապրող կանանց վրա:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կանանց հասանելիությունը հանքարդյունաբերության հետ կապված տնտեսական օգուտներին խիստ սահմանափակ է: Նույնիսկ երբ հանքարդյունաբերական գործունեությունը զգալի եկամուտ է բերում, կանայք հաճախ չեն կարողանում ուղղակիորեն օգտվել այդ ռեսուրսներից: Որոշ հեղինակներ կասկածի տակ են դնում միասնական տնային տնտեսությունների մասին ավանդական տնտեսական ենթադրությունները՝ նշելով, որ տղամարդկանց կողմից վերահսկվող ռեսուրսները պարտադիր չէ, որ հատկացվեն ընտանիքի բարեկեցությանը[1]: Կանանց՝ տնտեսությունից դուրս մնալը հանգեցնում է ընտանիքի տղամարդկանցից կախվածության ավելացմանը և պոտենցիալ բացառելով կանանց ինչպես ընտանեկան, այնպես էլ համայնքային որոշումների կայացման գործընթացներից[2]:

Հանքարդյունաբերական գործունեությունը զգալիորեն ազդում է նաև կանանց ավանդական դերերի և պարտականությունների վրա: Ըստ մի շարք հեղինակների՝ հանքարդյունաբերական գործունեությունը հաճախ նվազեցնում է կանանց գյուղատնտեսական արտադրողականությունը[3], ազդելով պարենային անվտանգության մակարդակների վրա[4]: Գյուղատնտեսական հողերի կորուստը հանքարդյունաբերական գործունեության պատճառով և հողի բերրիության նվազումը հատկապես ազդում են կանանց ավանդական գյուղատնտեսական գործունեության վրա[5]: Ավելին, հանքարդյունաբերական գործունեությունից բնապահպանական վատթարացումը ուղղակիորեն ազդում է կանանց՝ ավանդական պարտականությունները կատարելու կարողության վրա: Կանայք ստիպված են ավելի շատ ժամանակ և ջանք ներդնել հիմնական կարիքները՝ սնունդ և ջուր ապահովելու համար, ինչը կրճատում է այլ գործունեության համար հասանելի ժամանակը, ներառյալ երեխաների կրթությունը[6]:

Հանքարդյունաբերական գործունեության առողջական ազդեցությունները երևի թե ամենաքննարկված թեմաներից են, որոնք իրենց հետևանքն են ունենում բոլորի վրա, սակայն

---

[1] Eftimie, A., Heller, K., Strongman, J., 2009. In: Gender Dimensions of the Extractive Industries: Mining for Equity. The World Bank
Jenkins, K., 2014. Women, mining and development: An emerging research agenda, *The Extractive Industries and Society, 1 (2014)329-339*

[2] Hill, C., Madden, C., & Collins, N., 2017. A guide to gender impact assessment for the extractive industries. Melbourne: Oxfam Australia. Retrieved from https://www.oxfam.org.au/ wp-content/uploads/2017/04/2017-PA-001-Gender-impact-assessments-in-mining- report_FA_WEB.pdf.

[3] Cariño, J. K., 2002. Women and mining in the Cordillera and International Mining Network. In I. MacDonald & C. Rowland, *Tunnel vision: Women, mining and communities* (pp.16-19). Fitzroy: Oxfam Community Aid Abroad.

[4] Hinton, J. J., Veiga, M. M., & Beinhoff, C., 2003. Women and artisanal mining: Gender roles and the road ahead. In G. Hilson (Ed.), *The socioeconomic impacts of artisanal and small- scale mining in developing countries* (pp. 149-188)

[5] Bose, S., 2004. Positioning women within the environmental justice framework: a case from the mining sector. Gend. Technol. Dev. 8 (3), 407–412.

[6] Eftimie, A., Heller, K., Strongman, J., 2009. In: Gender Dimensions of the Extractive Industries: Mining for Equity. The World Bank
Centre for Environmental Rights, 07.10.2021. How mining erodes the rights of women, Retrieved from: https://cer.org.za/news/how-mining-erodes-the-rights-of-women-2

հատկապես առավել խոցելի դարձնելով կանանց և երեխաներին: Հետազոտությունները բացահայտել են բազմաթիվ առողջական խնդիրներ հանքարդյունաբերական համայնքներում: Այդ խնդիրներից են թունավոր նյութերի (մկնդեղ, կապար, կադմիում, պղինձ և սնդիկ) ազդեցությունը, մաշկային ցանի, գլխացավերի և շնչառական հիվանդությունների ավելացած դեպքերը[7], վերարտադրողական առողջության խնդիրները, ներառյալ մեռելածնություն, բնածին արատներ և վիժումներ[8]:

Կառավարման նշանակալի խնդիր է կանանց համակարգված բացառումը հանքարդյունաբերության հետ կապված որոշումների կայացման գործընթացներից: Բազմաթիվ ուսումնասիրություններ ընդգծում են, որ կանանց հաճախ անտեսում են համայնքային խորհրդակցություններում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են նախնական բանակցությունները հանքարդյունաբերական ընկերությունների հետ, հողօգտագործման համաձայնագրերը, փոխհատուցման պայմանավորվածություններ, օգուտների բաշխումը[9]:

Այս բացառումը ունի նաև էական հետևանքներ համայնքի զարգացման համար, քանի որ հետազոտությունները ցույց են տալիս, որ կանայք հակված են առաջնահերթություն տալ կայուն, երկարաժամկետ ծրագրերին, որոնք կենտրոնացած են սննդի, առողջության, կրթության և կարողությունների զարգացման վրա, մինչդեռ տղամարդիկ հաճախ նախընտրում են կարճաժամկետ ենթակառուցվածքային ծրագրեր[10]:

Ընդհանուր առմամբ՝ գրականության ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ հանքարդյունաբերական գործունեությունը, ոչ պատշաճ կառավարման արդյունքում, համապարփակ բացասական ազդեցություններ կարող է ունենալ հանքարդյունաբերական համայնքներում ապրող կանանց վրա՝ ազդելով նրանց տնտեսական հնարավորությունների, առողջության, ավանդական դերերի և որոշումների կայացման վրա: Այս ազդեցությունները ուժեղանում են գոյություն ունեցող գենդերային անհավասարությունների և մշակութային նորմերի պատճառով, որոնք սահմանափակում են կանանց մասնակցությունը հանքարդյունաբերության կառավարման և օգուտների բաշխման գործում: Սա վկայում է հանքարդյունաբերության քաղաքականության և կառավարման մեջ գենդերազգայուն մոտեցումների կրիտիկական անհրաժեշտության մասին:

---

[7] Valderrama, J. T., & Hudtohan, E. T., 2015. Impact of mining on health and wellbeing, International Seminar on the Socio-Economic and Environmental Impact of Mining, Sulawesi, Indonesia, 2015. Retrieved from http://emilianohudtohan.com/impact-of- mining-on-health-and-wellbeing/
Էկոլուր, 09.02.2023. «Քարաբերդ. աղքատություն ոսկու հետևում» տեսանյութ, հասանելի է՝ https://cvmedia.am/page-1716--88-

[8] Perks, R., 2012. How can public-private partnerships contribute to security and human rights policy and practice in extractive industries? A case study of the Democratic Republic of Congo (DRC). *Resources Policy, 37*(2), 251-260
Hinton, J. J., Veiga, M. M., & Beinhoff, C., 2003. Women and artisanal mining: Gender roles and the road ahead. In G. Hilson (Ed.), *The socioeconomic impacts of artisanal and small- scale mining in developing countries* (pp. 149-188).

[9] Scheyvens R., & Lagisa, L., 1998. Women, disempowerment, and resistance: An analysis of logging and mining activities in the Pacific. *Singapore Journal of Tropical Geography, 19*(1), 51-70
Byford, J., 2002. One day rich: Community perceptions of the impact of the Placer Dome gold mine, Misima Island, Papua New Guinea. In I. Macdonald and C. Rowland (Eds.), *Tunnel vision: Women, mining and communities,* (pp. 30-33) Oxfam Community Aid Abroad
Lahiri-Dutt, K., 2007. Roles and status of women in extractive industries in India: Making a place for gender-sensitive mining development. *Social Change, 37*(4), 37-64

[10] Eftimie, A., Heller, K., Strongman, J., 2009. In: Gender Dimensions of the Extractive Industries: Mining for Equity. The World Bank

Այսպիսով՝ այս հետազոտության **նպատակն** է հասկանալ հանքարդյունաբերության արդյունքում առաջացած հնարավոր ռիսկերն ու խնդիրները հանքարդյունաբերության ազդակիր համայնքներում բնակվող կանանց կյանքի որակի վրա:

Հետազոտության **խնդիրներն** են՝

- ուսումնասիրել հանքարդյունաբերության արդյունքում առաջացած խնդիրները կանանց կյանքի վրա՝ կենտրոնանալով առողջության, սոցիալ-տնտեսական իրավիճակի, շրջակա միջավայրի և սոցիալական ոլորտների վրա:
- ներկայացնել առաջարկներ ստացված արդյունքների հիման վրա:

Հայաստանում գրանցված հանքերի թիվը 900 է, որոնցից 45-ը մետաղական հանքեր են[11], որոնց մեծամասնությունը գտնվում են ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում:

Հետազոտության թիրախային բնակավայրերը գտնվում են Լոռու մարզում և չորսն են՝ Ախթալա, Մեծ Այրում, Թեղուտ և Շնող:

Մեթոդաբանություն

Հետազոտության համար կիրառվել է որակական մեթոդաբանական մոտեցումը: Տվյալների հավաքումն իրականացվել է ֆոկուս խմբային քննարկման և առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի մեթոդների միջոցով:

Ֆոկուս խմբային քննարկումներ: Ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են հետազոտության թիրախ բնակավայրերի կանանց հետ: Այս մեթոդը հնարավորություն է տվել խորքային ուսումնասիրել կանանց փորձառությունները, ընկալումները և դիրքորոշումները թեմայի վերաբերյալ:

Իրականացվել է յոթ ֆոկուս խմբային քննարկում՝ երկուական Մեծ Այրում, Շնող և Թեղուտ բնակավայրերում, մեկը՝ Ախթալա բնակավայրում: Ամեն համայնքում քննարկումներից մեկն իրականացվել է 18-35 տարեկան կանանց հետ, իսկ մյուսը 36 և ավելի մեծ տարիքի կանանց հետ: Ընդհանուր, ֆոկուս խմբային քննարկումներին մասնակցել է 50 կին:

Բնակավայրեր	Խմբեր	Քանակ
Ախթալա	36+	1
Մեծ Այրում	18-35	1
	36+	1
Շնող	18-35	1
	36+	1
Թեղուտ	18-35	1
	36+	1
	Ընդհանուր	**8**

[11] Matouskova, K., Mach, V., Grechko V., et al., 2023. The Price of Gold. How gold mining affects pollution with heavy metals in Armenia

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ: Իրականացնել են նաև հարցազրույցներ առանցքային տեղեկատուների՝ այդ համայնքներում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև թեմային առնչվող այլ անձանց հետ: Ընդհանուր իրականացվել է 6 հարցազրույց:

Առանցքային տեղեկատուներ	Հարցազրույցների քանակ
ՀԿ ներկայացուցիչներ	3
ՏԻՄ ներկայացուցիչներ	2
Այլ տեղեկատուներ	1
Ընդհանուր	**6**

Տվյալների հավաքում և վերլուծություն: Նախքան ֆոկուս խմբային քննարկումները և հարցազրույցներն իրականացնելը մասնակիցներին ներկայացվել է հետազոտության նպատակը և ստացվել է ձայնագրության թույլտվություն: Ձայնագրությունները սղագրվել են՝ պահպանելով գաղտնիության բոլոր սկզբունքները: Որակական տվյալների համար իրականացվել է թեմատիկ վերլուծություն:

Հետազոտության սահմանափակումներ: Այս հետազոտության սահմանափակումը ֆոկուս խմբերի քննարկումների համար մասնակիցների հավաքագրման խնդիրն էր, քանի որ որոշ կանայք վարանում էին ներգրավվել այս թեմայի շուրջ քննարկումներում: Հավաքագրման այս մարտահրավերը կարող էր հանգեցնել հիմնականում այն կանանց մասնակցությանը, ովքեր ավելի հարմարավետ էին զգում այս խնդիրները քննարկելիս՝ պոտենցիալ բաց թողնելով այլ կանանց կարևոր տեսակետները:

Հետազոտության արդյունքներ

Հետազոտության հաջորդ բաժիններում ներկայացված են կանանց տեսանկյունից հանքարդյունաբերության ազդեցությունը առողջության, տնտեսական հնարավորությունների, շրջակա միջավայրի, սոցիալական կյանքի և որոշումների կայացման գործընթացների վրա:

Հանքարդյունաբերության ազդեցությունը կանանց առողջության վրա

Բոլոր ուսումնասիրված համայնքներում հանքարդյունաբերական գործունեության առավել նշանակալի մտահոգությունը առողջապահական հետևանքներն են, հատկապես կանանց և երեխաների համար, որոնք դիտարկվում են որպես առավել խոցելի խմբեր:

Վերարտադրողական առողջություն և մայրության հետ կապված մտահոգություններ

Առողջության հետ կապված ամենատագնապալի ազդեցություններից մեկը, որը հետևողականորեն նշվել է բոլոր համայնքներում, վերաբերում է կանանց վերարտադրողական առողջությանը: Հետազոտությանը մասնակցած կանայք և առանցքային տեղեկատուները հաղորդում են հղիության ընդհատման հաճախակի դեպքերի մասին, որը նրանք կապում են հանքարդյունաբերությունից առաջացած օդի աղտոտման հետ: Մտահոգությունը տարածվում է հղիությունից մինչև պտղի զարգացում և երեխաների առողջություն: Ըստ առանցքային տեղեկատուներից մեկի՝ հատկապես ուշագրավ է, երբ տեղի կանայք, երբ հղիանում են, *«իրենք բժշկին սեռը չեն հարցնում, իրենք հարցնում են, թե արդյո՞ք երեխան առողջ է»*: Սա արտացոլում է այս համայնքներում բնածին արատների և զարգացման խնդիրների վերաբերյալ խորը արմատավորված մտահոգությունը:

> *«Կանանց օրգանիզմը շատ ավելի խոցելի է, նախ իր կառուցվածքի և առանձնահատկությունների առումով, մյուս կողմից, քանի որ կանայք իրենց կյանքի որոշակի փուլերում շատ պատասխանատու գործառույթ են կատարում՝ վերարտադրողական ֆունկցիա»: Մեջբերում առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից*

> *«Նաև հղիությունը կանայք սկսել են ավելի ծանր տանել, ավելի շատ են լինում դեպքեր երբ կորցնում էին երեխային կամ երեխան ծնվում է այլ հիվանդություններով»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 18-35 տարեկան*

Վերարտադրողական առողջության խնդիրներից բացի հետազոտության մասնակիցները նաև հաղորդում են տարբեր քրոնիկ առողջական խնդիրների՝ արյան ճնշման խնդիրների, սրտի հետ կապված հիվանդությունների տարածվածության մասին: Քաղցկեղի դեպքերը, հատկապես երեխաների շրջանում, նշվել են բոլոր համայնքներում: Առողջական խնդիրները հատկապես առավել շատ են շեշտվել պոչամբարների մոտ գտնվող համայնքներում: Այս համայնքների կանայք հաղորդել են ֆիզիկական թուլության և ավելի հաճախակի հիվանդությունների մասին՝ համեմատած իրենց ավելի երիտասարդ տարիների հետ, ինչը նրանք վերագրում են հանքարդյունաբերության հետ կապված աղտոտման շարունակական ազդեցությանը: Մասնակիցները հետևողականորեն նշել են ընդհանուր թուլություն, գլխացավեր և շնչառական խնդիրներ:

Այնուամենայնիվ, կանանց մեծ մասը, քանի որ չեն անցել համապարփակ առողջապահական հետազոտություններ, զգուշավոր էին այս երևույթները միանշանակ կապել հանքարդյունաբերական գործունեության հետ:

«Բավականին շատացել են ուռուցքային հիվանդությունները, հատկապես՝ քաղցկեղը: Շատ են նաև շնչառական խնդիրները»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 36+ տարեկան

«Մարդիկ հաճախ զգում են ֆիզիկական թուլություն, գլխացավեր, շատ են նաև կան դիաբետիկ հիվանդություններով մարդիկ»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 36+ տարեկան

Առողջապահական ենթակառուցվածքներ և հասանելիություն

Առողջապահական խնդիրներն ավելի են սրվում առողջապահական ենթակառուցվածքների և ծառայությունների էական բացերի պատճառով: Իրավիճակը զգալիորեն տարբերվում է համայնքների միջև: Մինչ բնակավայրերի մի մասը, օրինակ Ճնողը, ունեն համեմատաբար լավ հագեցած ամբուլատորիա, բուժքույր և բժիշկ, այլ բնակավայրեր, օրինակ Մեծ Այրումը, չունեն նույնիսկ բազային բժշկական պայմաններ: Առողջապահական ծառայությունների հասանելիության այս անհավասարությունը լրացուցիչ բեռ է ստեղծում կանանց համար, ովքեր հաճախ ստիպված են լինում մեկնել Ալավերդի հիմնական բժշկական ծառայությունների համար:

Առողջապահական ծառայությունների ֆինանսական խոչընդոտները ևս նշվել են հետազոտության մասնակիցների կողմից: Ըստ նրանց՝ շատ ընտանիքներ չեն կարող իրենց թույլ տալ կանոնավոր առողջության ստուգումներ կամ անհրաժեշտ դեղորայք: Այս իրավիճակը հատկապես դժվար է քրոնիկ հիվանդություններ ունեցող անդամներով կամ կանոնավոր բժշկական ուշադրության կարիք ունեցող երեխաներով ընտանիքների համար:

«Գյուղում ոչ մի ծառայություն չկա, չկա բուժկետ, չկա դեղատուն, բացարձակապես ոչինչ չկա: Հիմնականում ստիպված ենք լինում գնալ կողքի գյուղ, սակայն այլ դեպքերում օգտվում ենք Ալավերդու կամ Այրում քաղաքների բժշկական կենտրոններից»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 18-35 տարեկան

«Համայնքում առկա է ամբուլատորիա, ունենք տեղական շատ լավ բժիշկ, ով միշտ աջակցում է: Համայնքում կահավորված է ամբուլատորիան և վերջին տարիներին բարելավվել է առողջապահական ծառայությունների վիճակը»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 36+ տարեկան

«Շատ հաճախ այդ ամենը առաջացնում է ֆինանսական բարդություններ, քանի որ ոչ բոլորը ունեն հնարավորություններ մուծելու հետազոտվելու համար և մարդիկ ստիպված նախընտրում են մնալ հիվանդ»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 36+ տարեկան

Կանխարգելիչ առողջապահություն և մշտադիտարկում

Համայնքներում բացահայտված կրիտիկական բացը համակարգված առողջապահական մշտադիտարկման և կանխարգելիչ խնամքի ծրագրերի բացակայությունն է: Մինչ որոշ հանքարդյունաբերական ընկերություններ երբեմն կազմակերպում են առողջության զննումներ իրենց աշխատակիցների համար, չկա առողջապահական մշտադիտարկման համապարփակ համակարգ ամբողջ համայնքի համար, հատկապես կանանց և երեխաների համար, ովքեր կարող են տուժել շրջակա միջավայրի աղտոտումից, բայց անմիջականորեն չեն աշխատում հանքերում: Կանանց կողմից նշված մեկ այլ խնդիր, որը կարող է սրել առողջական խնդիրները, վերաբերում է հիգիենայի և անվտանգության կանոններին տեղյան չլինելուն և դրանց չհետևելուն: Ինչպես նշվել է, օրինակ, հաճախ են լինում դեպքերը, երբ հանքից վերադառնալուց հետո տղամարդիկ չեն

փոխում իրենց հագուստը և շփվում են երեխաների, ընտանիքի այլ անդամների հետ՝ նրանց վտանգելով հնարավոր լրացուցիչ ռիսկի:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները բացահայտում են, որ այս համայնքներում երբևէ չի իրականացվել պետական մակարդակով առողջության վրա ազդեցության գնահատում, չնայած առողջապահական ռիսկերի հստակ ապացույցներին:

«Մի քանի տարի առաջ Առողջապահության նախարարությունից պատասխանել էին, որ իրենք դիմել են Առողջապահության միջազգային կազմակերպություն, որպեսզի մշակեն չափորոշիչներ երկու հանքարդյունաբերական և երկու ոչ արդյունաբերական համայնքների համեմատությունը գնահատելու համար, սակայն որևէ գործընթաց չսկսվեց»: Մեջբերում առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից

«Լավ կլիներ, եթե հանքը համայնքում աջակցեր, որ իրականացվեին առողջապահական ծրագրեր, անվճար հետազոտություններ անեին, բոլորի համար, քանի որ նրանց գործունեությունը ազդում է բոլորիս առողջության վրա»: Մեջբերում կանանց հետ քննարկումից, 36+ տարեկան

Հոգեկան առողջություն և հոգեբանական ազդեցություն

Չնայած հետազոտության ընթացքում ուղղակիորեն քիչ է քննարկվել, սակայն պատասխաններից կարելի է նաև եզրակացություն անել մշտապես առողջապահական մտահոգություններով ապրելու հոգեբանական ազդեցության մասին՝ որպես նշանակալի խնդիր: Իրենց երեխաների առողջության, ջրի և սննդի անվտանգության, և իրենց համայնքների վրա հանքարդյունաբերության երկարաժամկետ հետևանքների վերաբերյալ անհանգստությունները ստեղծում են մշտական սթրեսի վիճակ, որն ինքնին դառնում է առողջապահական մտահոգություն:

Ապագա հետևանքներ

Երկարաժամկետ առողջապահական հետևանքները մնում են այս համայնքների գլխավոր մտահոգությունը: Հատուկ անհանգստություն կա շրջակա միջավայրում ծանր մետաղների կուտակման և ապագա սերունդների վրա դրանց հնարավոր ազդեցության վերաբերյալ:

